



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

31.05.2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ՍՑ-15/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.07.2015թ. N 1/73-1/19795-15 և 11.02.2016թ. N 1/73-3/4742-16 գրություններով ներկայացված Ա/Ձ Զեմմա Վանյանին (ՀՎՀՀ՝ 84543837) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-15/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-15/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 27.05.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 27.07.2015թ. N 1/73-1/19795-15 և 11.02.2016թ. N 1/73-3/4742-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել Ա/Ձ Զեմմա Վանյանին (այսուհետ նաև՝ Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի

հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերջինիս Յուզակում ներառելու համար:

2. Ա/Ձ Զեմմա Վանյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 16.02.2016թ. N 01/04.1/490-16 և 18.02.2016թ. N 01/04.2/572-16 գրություններով դիմել է Ա/Ձ Զեմմա Վանյանին, սակայն վերջինիս կողմից պատասխան չի ստացվել:

Ա/Ձ Զեմմա Վանյանը, պատշաճ ծանուցված լինելով 14.04.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՅ-ԳԲԽ-15/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը: Նիստի ընթացքում Ա/Ձ-ն հաստատեց, որ «ՁԻՀ-ՇՀԱՊՁԲ-15-15/8» և «ԵՊՀՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին մասնակցության հայտեր ներկայացնելու օրերի դրությամբ ունեցել է համապատասխանաբար 21.382 և 21.472 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 20.07.2015թ. թիվ ՁԻՀ/8-233 գրությամբ հայտնել է, որ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի կողմից կազմակերպված «ՁԻՀ-ՇՀԱՊՁԲ-15-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Զեմմա Վանյանը:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, 03.07.2015թ. ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.07.2015թ. տրամադրել է հարցման մասին եզրակացություն, համաձայն որի Ա/Ձ-ն վերոհիշյալ ընթացակարգին հայտ ներկայացնելու օրվա՝ 02.07.2015թ. դրությամբ ունեցել է 21.382 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Պատվիրատու 1-ը, ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի և Կարգի 122-րդ կետի դրույթներով՝ խնդրել է նախաձեռնել Ա/Ձ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Պատվիրատուն 1-ը 20.07.2015թ. թիվ ՁԻՀ/8-233 և 09.02.2016թ. թիվ ՁԻՀ/Ֆ-46 գրություններով ներկայացրել է «ՁԻՀ-ՇՀԱՊՁԲ-15-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատու 1-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 14.04.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ԱՖ-ԳԲԽ-15/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. «Վ. Բյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Վ. Բյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 22.07.2015թ. թիվ 01-20/346 գրությամբ հայտնել է, որ Կարգի 48-րդ կետի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի կողմից հայտարարված «ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի ընթացքում ՀՀ ֆինանսների

նախարարությունից ստացված եզրակացությունից պարզվել է, որ Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող:

Պատվիրատու 2-ը 23.07.2015թ. թիվ 01-20/346 և 04.02.2016թ. թիվ 01-20/32 գրություններով ներկայացրել է «ԵՊԼՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատու 2-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 14.04.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՅ-ԳԲԽ-15/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. ՍՅ-ԳԲԽ-15/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 27.05.2016թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 27.07.2015թ. N 1/73-1/19795-15 և 11.02.2016թ. N 1/73-3/4742-16 գրություններով ներկայացված Ա/Ձ Զեմմա Վանյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

6. ՍՅ-ԳԲԽ-15/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 27.07.2015թ. N 1/73-1/19795-15 և 11.02.2016թ. N 1/73-3/4742-16 գրություններով ներկայացված Ա/Ձ Զեմմա Վանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի կողմից «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՁԻՀ-ՇՀԱՊՁԲ-15-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) մասնակցելու նպատակով Ա/Ձ Զեմմա Վանյանը **02.07.2015թ.** հայտ է ներկայացրել:

2. Ա/Ձ Զեմմա Վանյանը Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով հայտի N 2 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 02.07.2015թ. ժամը 15:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի «բ» պարբերությամբ որոշել է 1-ին չափաբաժինի մասով Ա/Ձ Զեմմա Վանյանին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

4. «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 03.07.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Զեմմա Վանյանի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին 11.07.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ա/Ձ Զեմմա Վանյանը **հայտ ներկայացնելու՝ 02.07.2015թ. դրությամբ ունեցել է 21.382 ՀՀ դրամ** ժամկետանց հարկային պարտավորություն:

6. Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 09.07.2015թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է Ա/Ձ Զեմմա Վանյանի հայտը մերժել:

7. «Վ. Բյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից «Վ. Բյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված

«ԵՊԼՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) մասնակցելու նպատակով Ա/Ձ Զեմմա Վանյանը **08.07.2015թ.** հայտ է ներկայացրել:

8. Ա/Ձ Զեմմա Վանյանը Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով հայտի N 2 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

9. «Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին Ընթացակարգ 2-ի շրջանակներում 10.07.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Զեմմա Վանյանի վերաբերյալ:

10. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին 18.07.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ա/Ձ Զեմմա Վանյանը **հայտ ներկայացնելու՝ 08.07.2015թ. դրությամբ ունեցել է 21.472 ՀՀ դրամ** ժամկետանց հարկային պարտավորություն:

11. «ԵՊԼՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.07.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշել է Ա/Ձ Զեմմա Վանյանի հայտը մերժել:

12. Կենտրոնի՝ սույն եզրակացության տրամադրման օրվա դրությամբ, Ա/Ձ-ի կողմից չի վերականգնվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված ու Կենտրոնի և Ա/Ձ Զեմմա Վանյանի միջև 08.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-15/8-67» ծածկագրով շրջանակային համաձայնագրին համապատասխան հաշվակված տուժանքը:

7. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՍՅ-ԳԲԽ-15/16 բողոքը, գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ հետևյալ հիմնավորմամբ.

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի 20.07.2015թ. թիվ ՁԻՀ/8-233 և 09.02.2016թ. թիվ ՁԻՀ/Ֆ-46 գրությունները և կից փաստաթղթերը, «Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 23.07.2015թ. թիվ 01-20/346 և 04.02.2016թ. թիվ 01-20/32 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ **գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, **եթե հայրը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **շրջանակային համաձայնագրերի կնքման դեպքում հայրի ապահովման չափը հավասար է գնումների բազային միավորին:**

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում

ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Նույն կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է **3 տարի ժամկետով**, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ սույն կետի **1-ին**, 2-րդ և 3-րդ **ենթակետերով նախատեսված տուժանքը, հաշվարկված վնասը, տույժը կամ տուգանքը չեն վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:**

Ա/Ձ Ջեմմա Վանյանը Ընթացակարգ 1-ին և 2-ին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտերի N 2 հավելվածներով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատուները, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցումներով, խնդրել են տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Ջեմմա Վանյանի վերաբերյալ, որին ի պատասխան տրամադրվել են եզրակացություններ, համաձայն որոնց՝ Ա/Ձ Ջեմմա Վանյանը՝ հայտերը ներկայացնելու օրերի **(02.07.2015թ. և 08.07.2015թ.)** դրությամբ ունեցել է համապատասխանաբար 21.382 ՀՀ դրամ և 21.472 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Այսպիսով՝ ՀՀ ֆինանսների նախարարության 03.07.2015թ. և 10.07.2015թ. տրամադրված եզրակացությունների համաձայն՝ Ա/Ձ Ջեմմա Վանյանի կողմից Ընթացակարգ 1-ի և 2-ի մասնակցության հայտերի N 2 հավելվածներով ներկայացված հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունները չեն համապատասխանում իրականությանը և Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի տեսանկյունից հանդիսանում են կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ա/Ձ Զեմմա Վանյանին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով՝ Խորհուրդը արձանագրում է, որ Ա/Ձ Զեմմա Վանյանի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը **02.07.2015թ.** մասնակցելով «ՁԻՀ-ՇՀԱՊՁԲ-15-15/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և **08.07.2015թ.** կրկին հայտ է ներկայացրել «Վ. Բոյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԵՊԼՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, որի շրջանակներում ևս ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից խախտվել են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, այն է՝ **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում Ընկերությունը ներկայացրել է կեղծ տվյալ, որը հիմք է Ա/Ձ Զեմմա Վանյանին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար:**

Միևնույն ժամանակ Խորհուրդը արձանագրում է, որ սույն եզրակացության ներկայացման օրվա դրությամբ, Ընկերության կողմից չեն վերականգնվել Կենտրոնի և Ա/Ձ Զեմմա Վանյանի միջև 08.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-15/8-67» ծածկագրով շրջանակային համաձայնագրին համապատասխան հաշվարկված տուժանքի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 27.07.2015թ. N 1/73-1/19795-15 և 11.02.2016թ. N 1/73-3/4742-16 գրություններով ներկայացված Ա/Ձ Զեմմա Վանյանին (ՀՎՀՀ՝ 84543837) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝



Մարդյան Ռոման



Գրիգորյան Էդվարդ